

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը նոյեմբերի 7-ին
Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 31 քաղաքացի. դրամական
օգնության համար դիմել է վեց, աշխատանքի
տեղավորման՝ տասնուհին, բնակարանով ապահովելուն՝ երկու,
բիզնես ծրագրի իրականացման աջակցության՝ երկու, վթարային
շենքի, ջրատաքացուցիչի վերանորոգման, հողի
սեփականաշնորհման հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության երեք դիմումներին տրվել է դրական
լուծում, երեք դիմում ուղղակիորեն փոխվում է:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում
մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են մյուս
խնդիրների վերաբերյալ դիմումները: